«Հաստատում եմ»

Խ. Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանի ռեկտոր,

հոգեբ.գ.դ., պրոֆեսոր-------- Մ. Ռ. Գևորգյան

«06» «հունիսի» 2025 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մարիաննա Տիգրանի Հակոբյանի «Նախընտրական հեռուստաբանավեճը հայաստանյան հեռուստաեթերում (2003-2023)» Ժ.01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Մարիաննա Տիգրանի Հակոբյանի «Նախընտրական հեռուստաբանավեճը հայաստանյան հեռուստաեթերում (2003-2023)» թեկնածուական ատենախոսության հիմնական շարադրանքը բաղկացած է Ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, Եզրակացություններից և Գրականության ցանկից: Ներածականում ատենախոսը հստակ հիմնավորել է իր ուսումնասիրության արդիականությունը՝ առ այն, որ պայմանավորված արդի հասարակական-քաղաքական գործընթացներում թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության գործուն ինտեգրմամբ՝ հարկ է վերաիմաստավորել նախընտրական հեռուստաբանավեճի արդյունավետությունը, որով կձևավորվի ժողովրդավարական երկրին պատշաճող հանրային կարծիք և օրակարգ, կնպաստի քաղաքական հաղորդակցության նոր մշակույթի ամրապնդմանը: Ատենախոսն իրավացիորեն փաստում է, որ քաղաքական քարոզարշավների և ընտրական տեխնոլոգիաների տարբեր շրջափուլերում զուտ քաղաքական հեռուստաբանավեճերի վերաբերյալ հետազոտությունները մեզանում սակավաթիվ են: Այս բացը նա լրացրել է ինչպես հայ հեղինակների՝ բանավեճի

արվեստին նվիրված հետազոտություններով, այնպես էլ օտարազգիր հեղինակների՝ բուն քաղաքական բանավեճին առնչվող տեսական աշխատություններով, ինչը շահեկանորեն վկայում է ատենախոսության թեմայի բավարար մշակվածության մասին:

Քաղաքական հեռուստաբանավեճի առարկան, ընդհանրապես, կարելի է քննել տարբեր հայեցակետերով՝ քաղաքագիտական, սոցիոլոգիական, լեզվաբանական, հոգեբանական, լրագրողական և այլն: Այս համատեքստում նախընտրական հեռուստաբանավեճի առարկան առաջին անգամ քննվում է լրագրողական, այն է՝ որպես լուր կամ նորություն ընտրողին տեղեկատվություն փոխանցելու և կողմնորոշելու նպատակադրմամբ: Ատենախոսը հստակ ու ճշգրիտ ներկայացրել է իր ուսումնասիրության գիտական նորույթի լայն սպեկտրը՝ արդի հանրույթներում նախընտրական հեռուստաբանավեճերի յուրահատկության բացահայտում, 2003 թ. Քոչարյան-Դեմիրճյան հեռուստաբանավեճից մինչև 2023 թ. ՏԻՄ ընտրությունների հեռուստաբանավեճերի լուսաբանում, հայաստանյան արդի քաղաքական վայրիվերումների համատեքստում նախագահական, խորհրդարանական և համայնքային նախընտրական քարոզարշավներում հեռուստաբանավեճերի ձևաչափերի դիտարկում և այլն:

Հստակություն ունի նաև հետազոտության առաջադիր նպատակը, այն է՝ գնահատել նախընտրական հեռուստաբանավեճի ազդեցությունը ընտրողների քաղաքական կողմնորոշման, տեղեկացվածության և որոշումների կայացման գործընթացի վրա՝ շեշտադրելով բանավեճերի կառուցվածքը, նրա բովանդակությունն ու ներկայացման առանձնահատկությունները: Նշյալ նպատակներից բխող առաջադիր խնդիրները ևս ձևակերպված են հստակ, մասնավորապես՝ իրականացնել ՀՀ հեռուստաեթերի նախընտրական հեռուստաբանավեճերի առանձնահատկությունների քննական վերլուծություն՝ մոդեռատորների գործառույթներ, անցկացման ձևաչափեր և այլն: Գնահատելի է, որ ատենախոսը Ներածականում ձևակերպել է ուսումնասիրության Կանխավարկածը, հանգամանք, որը խիստ սակավադեպ է հատկապես վերջին տասնամյակի ատենախոսություններում: Կանխավարկածի հիմնական դրույթը, որ Հայաստանում հեռուստաբանավեճի մշակույթը դանդաղ է զարգանում, իր լիակատար

արտացոլումն է գտել ինչպես ատենախոսության հիմնական շարադրանքում, այնպես էլ Եզրակացություններում. վերջինս ամբողջությամբ արտացոլում է հետազոտության հիմնական արդյունքները:

Հավելենք, որ աշխատանքն արված է բարեխղճորեն, նյութի հստակ իմացությամբ, մասնագիտական գրականության լայն օգտագործմամբ: Տպագիր տեքստի ձևավորումը նույնպես կատարված է խնամքով՝ թավ, շեղատառ նշումներով, համարակալումներ և այլն:

Ինչպես բոլոր ատենախոսություններում, այնպես էլ այս դեպքում առկա են տարաբնույթ վրիպակներ, լեզվառճական թերացումներ, որոնք ամենևին չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը:

Եզրակացություն

Մարիաննա Տիգրանի Հակոբյանի «Նախընտրական հեռուստաբանավեճը հայաստանյան հեռուստաեթերում (2003-2023)» Ժ.01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունն ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, ունի կարևոր տեսական-կիրառական նշանակություն իրավական, ժողովրդավարական երկրներում նախընտրական հեռուստաբանավեճերի մշակույթի ձևավորման խնդրում, այն կարող է օգտակար լինել ոչ միայն լրագրողներին, այլև քաղաքագետներին ու սոցիոլոգներին, հոգելեզվաբաններին և հումանիտար բնագավառի այլ մասնագետների:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջները, ուստի միջնորդում ենք Մասնագիտական խորհրդին Մարիաննա Տիգրանի Հակոբյանին շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան Ժ.01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Լրագրության ամբիոնի 06.06.2025 թ. նիստում (արձանագրություն թիվ 11), որին մասնակցել են ֆակուլտետի դեկան, մանկ.գ.թ., պրոֆեսոր Գ. Թադևոսյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Մարտիրոսյանը,

Լրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ. Գալստյանը, մանկ. գ.թ., պրոֆեսոր Ա. Բաղդասարյանը, արվեստագիտության թեկնածուներ Ա. Աբրահամյանը, Ա. Առաքելյանը, պրոֆեսորներ Հ. Ավետիքյանը, Ա. Երզնկյանը, դասախոսներ՝ դոցենտի պաշտ. Կ. Քոչարյանը, Գ. Նալբանդյանը:

Հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համալսարանի

Լրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ. Գալստյան

Խ. Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համալսարանի

գիտական քարտուղար, մանկ. գ.թ., դոցենտ Մ. Իսպիրյան

«06» «հունիսի» 2025 թ.